ԿԻԼԻԿԻԱ

ՀԱՆԴԷՍ

ՇԱԲԱԹԱԿԱՆ

ԱՌՈՂՋԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ. 1870, ԵՊԵՏԵՄԲԵՐ 15. ԹԻՒ 13.

ԱՌՈՂՋԱԿԱՆ

ԱՂՋԿԱՆՅ ԳԵՂԵՑԻԿՈՒԹԻՒՆՆ

ՁԵՌՔ

Ձեռքն ալ, կնոջ գեղեցկութեան մէջ, մեծ պաշտօն ունի, որոյ համար բանաստեղծք չափազանցութիւն ալ ըրած են. արդարև, ձեռքն ալ, դիմաց նման իր դէմքը, համեմատութիւններն, իւր դէմն ունի. ուստի ձեռքն ալ մանաւանդ կնամոյ կկարօտի: Ձեւնոյներն, որ զանի տապալեցուն խորշակէ անզերծ կպահեն, փափկութեան և միանգամայն գեղեցկութեան պայմաններն են: Ձեռաց գծերն ամենէն աւելի ճնշող վտանգն է, անոր ճաթրտիքն և տզայոց սուղութիւն եղող իրենց ըղձանքներն ակնարկով կառնէն է: Աստր դէմն առնելու համար հաստատակեաց դրութիւն մը բաւէ: Վերոյիշեալներուն առաջինը բժշկելու միջոցները շատ են. բայց գժբաղդաբար, քիչ ազդու. ձեռաց վրայ դրդռիչ չխումներ, պինդով կամ օդով լուանալ եղեղուկի սաստիկ չրոյ մէջ խօթելէն յետոյ. յուրտ օրերու առեն, խիստ նեղ մորթէ

ձեռնոցները չդնելու հոգն, և մանաւանդ ձեռքերն արտաքին պաղէն մեկէն ի մեկ վառարանի մեծ տաքութեան ցուցնելը, բոլոր ատոնք, ցրտահարութեանց դէմ առնող միջոց և դարման են։ Պ. Կերման բժիշկը կխորհի ցրտահարութիւնն ուներող տղայոց կաղմուածքը ուժովցնելու կարևորութիւնը ծծմբային բաղնիքներով, ծովային բաղնիքներով. ատոնք խիստ օգտակար գտած է բաղմաթիւ փորձերով։

Բայց ձեռքն եթէ ձև ունի, ունի նաև ինքն իրեն համար դէմք մը, որոր խիստ զանազան և ղժայոյն կրնայ ըլլալ և է. կան ձեռքեր աղնուապետական կամ ամկապետական, տմտար կամ խելացի, խոհեմ կամ թեթեւ. կան նաև չիտակ կամ ծուռ. այսինքն մտայ հետ համաձայնող կամ անհամաձայն։ Անդարև խիստ դժուար է ծննդական կամ բնական այս յարմարութեանց առաջքն առնել. բայց խոհեմութեամբ և հետաւորութեամբ ընտրուած ձեռագործներն, ընկերանալով այս մասին վերաբերեալ առողջապահական խրատներով կարելի է մինչև ոահման մը փոփոխել։

Զմոռնանք նաև յիշել ձեռայ այն երկու սովորական յատկութիւններն ալ, որոնք տեսակ մը պակասութիւններ կրնան նկատուիլ. ինչպէս սովորաբար պաղ ձեռքերն և քրտնոտ ձեռքերն։ Երբեմն ալ այս երկու պակասութիւնները միանգամայն մեկ ձեռայ մէջ կդտնուին որ ան ատեն խիստ ղղուեցուցիչ են։ Ձեռայ մեկ մասամբ պաղութիւնը կրնայ ժառանգական ըլլալ, բայց սովորաբար ակար առողջութեան մը հետևութիւնն է, մարմնոյն տաքութիւնն ամեն կողմ հաւասար չբլլալով։ Հոտով բաղնիքներն և չոր շփումներն զգուիչ կամ կազդուրիչ բաղնիքներն այս հանգամանայ ազատչինին առաջքը կառնուն։ Իսկ ձեռայ քրտնելուն գալով, փորձը կսովրեցնէ, մեկ կողմէն, երբ երկայն առնենք ի վեր կդոյանայ մեծ վտանգ կայ գանի մեկէն ի մեկ դադրեցնելուն մէջ. բայց այս գժուարութեանց առաջքը կրնայ առնուիլ բժիշկին ցուցուցած ինամոց թէ բնութեամբն և թէ չափովը, և միւս

կողմանէ, կարելի է անոր երեսան եղած աստիճէն դանի (քըբ-ամինքը) ընչացնել տայ և փոքր վեպաս մը հասցնելու։

Դանի որ ձեռայ վրայ խօսելնուն կարևոր է փոքր ինչ ալ ոտից վրայ խօսիլ. զի յայտնի է որ մարդս ամեն կողմերէն աւելի ոտից վրայ մեծ դործ ունի մեռաս, ոտից վրայ իր ամեն ուժը կյուցնէ։ Սրդարև այս դիտողութիւնն այնքան ճշմարիտ է, որոյ համար Թամբեր հռչակաւոր բժիշկը կօչիկի վրայ ամբողջ հատոր մը դրած է և սա ևս դիտելի պէտք է թէ դեռ մեկ քանի հատորներ իսկ կրնայ դրուիլ, զի նիւթը խիստ ընդարձակ է։

Կօշիկն, իր պաշտօնն անվնաս կատարելու յարմար ըլլալու համար, պէտք է ըլլայ կակուղ, ամուր, օդաւոր և իր նիւթին ալ տաքութիւնը դիւրաւ կորսնցնող ըլլալու չէ։ Վերջապէս ոտից շարժուններն ամենայն ազատութեամբ ընել թողնելու է։

Իսկ մեր չատերուն հաղած կօշիկներն, որոնցմով ոտքերնիս տեսակ մը անշարժ կոճղ կընեն, որոնցմով ոտից մատուցները մեկզմեկու վրայ կճզմուին. մինչև այն աստիճան, որ ձևերնին կըփոխուի։ Երբ կօշիկները խիստ կարճ կամ խիստ նեղ են, մեծ անհանգստութեանց տեղի կուտան, որոց ամէն ոք տեղեակ և փորձառու է։ Սխալեսի կօշիկներն ոտից շարժուններըը կարդիլուն, որոն բազմաթիւ յօդուածներըը կդադրին շարժելէ, ոտից մէջ գանուող երակաց արեան շրջանը կխանգարէ, և հետևաբար ծնունդ կառնու. ոտից սովորական այն պատրութիւնն, որ շատ կանանց համար տեղի կուտայ ըլլային ու կարծքը պէտք եղածէն աւելի արիւն ելթալով հիւանդացնել. ահա այս է նախ նայելի դէպքերը պատճառը. պատճառ է նաև ոտից մատանց ըղձունքին մինչ մէջ մտնելու և մեծ ցաւ պատճառելու. այս ցաւերէն զատ, քալելը կդժուարանայ և իր հնարհքը կկորսնցնէ. և հետևաբար ցրտահարութեան ենթակայ կընէ։

Ծայրը սուր կօշիկ գործածելու սովորութիւնն օր քան օրէ

ընդհանրանալու վրայ է և հետևաբար իր առնչանքները մշանշենաւորելու : Ուղքին վրայ չափն առնուելով չինուած կօշիկներն, մանաւանդ ընտիր չինուածները միայն գործածելի են. բայց սա մեծ զգուշութիւնը մոռցուելու չէ, թէ կօշիկակարէն և թէ կօշիկի չափը տուողէն, թէ չափուելու առեն, ուղքը գետնի վրայ ամուր կերպով կռթնած ըլլայ. և ոչ թէ նըստուկ տեղն, ինչպես կընեն գրեթէ բոլոր կօշիկակարք, որոնց դեմ կբողոքէ Առողջաբանութիւնն :

Սրդարև առաջին դիրքին մէջ, այսինքն ուղքի վրայ կայնուած դիրքին մէջ, ուղքի տակի կամարը վար իջնալով, ուղքին երկայնութիւնը կաւելցնէ : Սյս կէտն երբ մոռցուի, ուղքերն անպատճառ աւելի կարճ կօշիկներու մէջ բանտարկելու ենթակայ կընան. այս գէշութեան դէմն առնելու համար, պէտք է որ ոտից ճիշդ և ամենաճիշդ ձևն առնելու համար յատկապէս գործիք մը հնարուի. որպէս զի ոտից կողմին ամեն մէկ մանաւորութեան ձևերն առնու :

Երբ կօշիկի մը ներբանը նեղ և շատ նեղ ըլլայ, երբ ուղքին կողմնակի մասերը դուրս ելած ըլլան, ոտից վրայ կայնելը դժուար և անհաստատ կըլլայ և ուղքը չափազանց կընեղուի : Նոյնպէս կօշիկի մը ծայրը պէտք է որ բաւական լայն ըլլայ, որպէս զի մատուներն իրարու վրայ չճմռնին. վերջապէս պէտք է որ ներբանը բաւական բարձր ըլլայ և կօշիկին ելաստիկ մասն, եթէ ունի, ազատ և դիւրին ըլլայ իր չարժմանց մէջ : Բարձր և սուր կրունկներով կօշիկի մօտան, զոր կհագնին շատ կանայք, վոտքը ինչ ևս իրենց հասակնին երկնցնելու վտանգաւոր, խիստ վնասակար է. նախ՝ որովհետև, ուղքը կամ բոլոր մարմինն, այսչափ սուր ծայրի մը վրայ իր հաւասարակշռութիւնը չկրնար պահել. որով թէ գետինը կդլտորուի և ուղքն յաճախ դառնալու են, թակայ կըլլայ : Բ. շատ առողջաբանները դիտած են թէ, բարձր կրունկներով կօշիկներու մօտան, ծանրութեան կեդրոնը փոխելով, հասակին ձևը կտգեղացնէ. Քամբել մինչև ան-

պահ կըսեր թէ, այսպիսի կօչիկներ գործածելու սովորութիւնը, կանանց նստարանի ոսկորներուն կազմը փոխելով ծննդաբերութիւնը կդժուարացնէ։ Կարելի է Քամբերի այս առաջարկութիւնը մեծ չափազանցութիւն մ'եղած ըլլայ, բայց սա անուրանալի է թէ այս տեսակ կօչիկները հագնողներն իրենց բնական գեղեցկութեան կվնասեն, և հետևաբար առողջութիւնին։

Ինչ որ ըսինք ձեռաց ձևին և գէմքին վրայ նոյնը կվերաբերի նաև ոտից. իր ձևերուն կանոնաւորութիւնը, կլորութիւնն, իր համեմատութիւններն ոչինչ համարելու չեն. բայց հագած կօչիկին առած ձևէն և իր յօդուածոց կակղութիւնը մեծապէս կազդեն իր դիմաց վրայ։ Ոտքն ալ ձեռաց նման իր գեղեցկութիւնն ունի, ինչպէս կնկարագրէ բանաստեղծութիւնը. զորօրինակ փոքրութիւնը, ձևերու չնորհալիութիւնն և կանոնաւորութիւնն, առանց մոռնալու այն կամարն, որնոր բոլոր մարմնոյն ծանրութիւնը վեհանձն կերպով վերելած կամարի մը վրայ կհանգստանայ. և որ կամարձին երբեմն երջանկութեամբ կբազդատեի կըսեր, "կամարի մը որուն տակ հեղեղ մը կանցնէր"։ Բոլոր ասոնք փափաքելի է, բայց բոլոր ասոնք եթէ չստացուիր, ամենքն ալ կօչիկի աղաւաղութեամբ կրնայ պահուիլ . . . .

ՅՈՒՇԻԿՔ

ՀԱՅՐԵՆԱՑ ՀԱՅՈՑ

Ի՛Հ· ՊԵՒՈՆԴԷ Մ· ԱԼԻՇԱՆ

Վ· ՄԽԻԹԱՐԵԱՆ

Բ·

ՆԱԽԱԲԱՆ

ԱՌ ՀԱՅԿԱԿՆ

(ՏԵ՛· ԿԱՒՒ· ԹԻ· 12. ԵՐԵ· 185)

Ա՛յս վերջի անդրադարձ մտածութիւնս այլ ըրի, Հայկակ, յիշեցընելու համար մեծ խնդիր մը կամ խմաստ մը, որ կու զանազանէ զՀայրենիս, որով և զՀայրենասէրս, ըստ բնական դրից երկրին։ Իրաւ է որ ով որ վերը յիշած յատկութեանց համար կրնայ իմ ըսել երկրին, անոր համար միշտ գնդեցիկ է հայրենիքն. սակայն երբ մէկն, մանաւանդ երրորդ անձ մը, երկու երկիր իրարու հետ բաղդատէ իբրև բնաշխին և բանաքնին, ի հարկէ կերպ կերպ զանազանութիւններ կու գտնէ անոնց մէջ, և ըստ այնմ առնոյց բնակչաց բնաւորութիւնն այլ յարմարած. իրենց բնական կազմուածքէն սկսեալ մինչև ի բարոյական բնոյնը. և ըստ կերպարանաց ու հանգամանաց երկրին՝ անոր վրայ ունեցած սէրն կամ համարումն այլ կը կերպաւորին։ Յայտնի է ամենուն թէ ինչ ազդեցութիւն ունին կլիմայք՝ տեղացեաց վրայ. ինչպէս՝ սաստիկ տաք կամ ցուրտ երկրի բնակիչք՝ տկար և չըլատեալ կ'ըլլան. ինչպէս բարե-

խառն կ'իմայիդ բնակիչք՝ աւելի բարեկեցիկք, բարեբնոյթք և կերպիք. չափաւոր ցրտութեան տակ եղողք՝ աւելի ժիր կ'ըլլան. չափաւոր տաքութեան տակ եղողքն՝ յիշ՝ աւելի զուարթ և զբօսասէր, ինչպես Պաղդիացին. միդամած երկրի բնակիչք՝ երբեմն վարուց վրայ այլ միջային քօղ մը կ'ընդունեն, մելամաղձ և ծանրաբարոյ կ'ըլլան, ինչպես Անգղիացին և Հոլանտացին: Այսպէս և գուցէ ա՛յլ աւելի, երկրին կազմուածքն և դիրքն ունին տպաւորութիւն ի վերայ բնակչաց: Թաթարստանի ծովանման չոր անապատաց բնակիչքն՝ հարկ է որ տարբեր բնաւորութիւն ունենան. մէկն միշտ գետինը փորելով հոն կենայ, մեկալն անդադար լերկ ու մերկ երկրին վրայ սահելով անցնի կամ մեռնի իր հօտերով և երամակներով՝ անոնց ճարակ գտնելու համար. մեկն անասուն և չինաստր, մեկալն անասուն և շինուածք: — Զուիցերացի լեռնաշատ և լճաշատ և նկարակերպ բարձանց և հովտաց բնակիչն՝ ի հարկէ պէտք է զմայլի իր հայրենեաց բնական գեղեցկութեան վրայ, որ ամենէն տըխուր եղանակի մէջ այլ իր շնորհքն ունի, օ՛րչափ ևս աւելի լաւ եղանակին մէջ. զարմանք չէ ուրեմն որ երբ օտարութեան մէջ իր ազգային երգը լսէ և հայրենեաց պատկերը իր վառվռուն գոյներովը նկարուի մտացն առջև, բոլոր սրտով լծուի երթալ հիւանդանոց և դրեթէ հիւանդանոց հայրենեացը կարօտով: Յունաց և Իտալացւոց այնչափ գեղապաղանգութեան ի գեղարուեստս՝ առաջին վարպետ եղած է իրենց հայրենի երկրին բնութիւնն. բարեխառն կլիմայն, գալար բուսաբերութիւնն, զանազանութիւն կամ եղևնիք դրիս՝ և ծովն..ծովն, այն ծեր և ալեզարդ մեծ վարժապետն՝ որ իր ահռէլ ձայներէն աւելի՝ իր կերպ ու կերպ ծիսանօքն ցամաքային կերպ ու կերպ ափանց և ծոցից վրայ. շատ զարմանալի բաներ ազդած է և կ'ազդէ Յունի մը, Վենետկեցւոյ մը, Անգղիացւոյ մը, Բրետոնի մը, և ո՛ր և է ազգի՝ որոյ երկիրն բազդաւոր եղեր է գտնել իր եղերաց

չափաւոր մաս մը մահկանաձև կամ աղեղնաձև տարածելու համար ւ՛ի կռիւ կապուտակ կոհակներու ։ Ժողովուրդ մը որ ունի հրամանատարներ՝ դիտելու այն անապատ ալեայց ղբօսանքը, և անոնց երեսէն հովով կամ հրով հրամած եկող և գայող քալուկ տուները՝ (նաւերը) աշխարհէ աշխարհ հեռաւոր կողմերու լուրեր և բերքեր տարուբերելով, այնպիսի ժողովուրդ՝ չի կրնար ապուշ մէկ մ՛ըլլալ ։ Բայց եթէ ծովին բոլորովին ծրագրելով գՍնգլիա՝ կուտայ անոր բնակչաց ծովասէրութեան պատիւն և գոռոզութիւն, կամ Յունաստանի կղզեայց մէջ կոտրտուելով՝ կուտայ անոր բնակչաց աշխոյժ և ժրութիւն, միայնդամայն և պարծիլ մը իրենց ափանց վրայ ։ գեղեցիկ և հովանաւոր դաշտերն այլ բարձր բարձր և զով լեռներն այլ՝ կուտան իրենց բնակչաց ոչ պակաս զուարճութիւն և պարծանք ։ Ինչուան ժայռատ տեղերու բնակիչքն՝ այն բնութեան ամենէն ամրուեստ կերպարանաց վրայ այլ կու գտնեն զարմանալի ձևեր և տեսքեր, որով կու զմայլին և կու պարծին իրենց հայրենեաց վրայ ։ . . . Բայց գուցէ չեն այլ կրնար ծածկել՝ այն չար ու խոշոր արարածոց առիթած կերպ մը չոր տպաւորութիւնն այլ՝ որ իրենց բարուց և չարժմանց կ՛ազդէ ։

Եթէ այսպիսի դիրք երկրի՝ զոր բնութիւնն միայն իր անգթայ ձեռքերով ձևացուցեր է, այսքան աղէկութիւն ունին աղգաց բարուց և աղգայնանց վրայ, ո՛րքան ևս առաւել զօրաւոր և զանազան կ՛ըլլան հայրենեաց աղդեցութիւնք ի ժողովուրդս՝ որոց երկրին վրայ բնականին հետ ձեռագործ և պատմական յիշատակարանք այլ երևին ցեղուցեղ ։ Երբոր մեկն օրերով քալելով համազգեայց երկրի մը սահմանաց մէջ՝ տեսնէ լերանց և ըլրոց վրայ հնացեալ և երբեմն կիսաւեր բերդեր և գղեակներ, հաստատուն պատուպով քաղաքներ, հին և մեծ պալատներ, բանուկ ճամբ բաններ և կամուրջներ, մեծամեծ հասարակաց շէնքեր, գայլուն կամ մանուպատ կամարներ, իրենց տակ քիտ-

ուածներուն պէս հնացեալ դերեզմաններ, հանդերձ նոր ու պայծառ շէնքերով, և ժամանակին զարդ ազգին համեմատ օգտակար և շահաւէտ գործարաններ, կրթարաններ, ժողովարաններ, հանդիսի և զբօսանաց տեղեր, քաղաքական և պետրոսական հրապարակներ, և այլն, և այլն. և այս ամենուն համար կարենայ ըսել թէ իմ համարիւն և համալեզու նախնեացս ձեռագործք են, որոնց ոմանց վրայէն երկայն դարեր ազգեր են, և դուէ հաղարաւոր տարիներու յիշատակարանք այլ կան անոնց մէջ. ի՞նչպէս սիրային կ'ուզէ կ'ընդլայնի, կու քարձրանայ, կու խաղայ և կու հանդչի ծոյլին մէջ. ի՞նչ օրինաւոր պարծանօք և դրեթէ հպարտութեամբ մը կրնայ ըսել՝ թէ ասոնք իմ հայրենեացս են, ասիկայ իմ հայրենիքս է. և թէ յանդիշատակ ժամանակաց հետէ միշտ մեր ազգն այս երկրիս և այս շէնքերուս տակ բնակեր է. ասիկայ մեր հայրենական կալուածն է, զոր սեփական օրինօք և քաղաքավարութեամբ պահեր են նախնիքս իր հին սահմանաց մէջ, և միչև ուրիշ սահմանաց և ազգաց: — Ահա, արդարև պատկայ կատարեալ և նախանձելի հայրենիք է. այսիկայ ընդարձակ հասարակաց բնիկ տուն մ'է, որ ամեն համազգի մարդու մանաւանդ տուներըը իր մէջ կու բովանդակէ. պատկայ ամեն կերպ զօրաւոր սեր և զմայլումն կ'ազդէ բնակչին վրայ. այդ է որ զգացուցեր և ազդեր է այն ամենայն հրաշալի հայրենասիրութեան կրքերը, այն աշխատութիւնները, համբերութիւնները, քաջութիւնները, և ինչուան կենանաւէտը զոհերը, երբեմն միայնակ, երբեմն ընկերակցօք և երբեմն բովանդակ բանակներով. զոր հռչակեր են պատմիչք, քերթողք և ճարտար արուեստաւորք. և որոց վրայ կու զարմանան ընթերցողք և լսողք՝ նաև յետ երկար դարուց անցնելու, և կու պարծին անոնց յետինն համազգի թոռանց թոռունքն այլ . . . Աչխարհք չէ կրնար այսօր հետև մոռնալ 3000 տարուան ծրոյից առաջ

դեպքը, և ոչ 2400 տարեան Սալամինա և Փերսեպոլիսի յիշատակները, որոց վրայ մինչ պիտի պարծի օրըստի աշխարհ որ գոյութիւն մը։ Աչքիս յիշատակը երկրաւոր յաւիտենականութիւն մ'են, ազգու և սիրուն։ Առանց նման քիչ շատ ուրիշ ազգեր այլ ունին իրենց անվախան և սիրուն յիշատակները, որ իրենց անուղղ վթեան հետ պիտի հընանան, և աւելի քան զվինի և զբաբելամութիւն հնագեալ՝ հին ախորժ յիշատակը զօրաւոր և քաղցր են մարդկան, և հառաջակաց հաւատար վայելելի ամեն ժամանակ։ . . . Ո՜հ, երբ այսպիսի յիշատակաց վրայ շարժի դրիչն, չի կրնար դոնե կայծերը չցատկեցնել. պատմիչն յանկարծ վիպասան կ'ըլլայ, բանաստեղծ։

Հայրենեաց հրեղէն հոսանքէն չհալոզ սիրտն՝ շատ ապաւաժ շատ ապառուամ շատ այլանդակ և այլանդիմի պիտի ըլլայ։ . . . Վա՛յ այդպիսի հրեշին. երկիր կոչ հալածէ զանիկայ, երկինք չիկրնար ընդունիլ սիրտ մը՝ որ այնքան կարծր գոյութիւն ըլլայ երկրի վրայ։ անհնար է որ հայրենասեաց մը և լուկ անհայրենասէր մը՝ առաքինի ըլլայ, թող թէ սուրբ։ Երկնից պատգամ է՝ թէ ընկերը չընսիրուն՝ չի կրնար գԱստուած սիրել. հապա բոլոր ընկերները բովանդակող հայրենիքը չսիրուն՝ ի՞նչպէս սիրէ ամեն սիրոյ կեդրոն և շուրմարան հանդերձեալ բնակարանն մարդուս հոգւոց։ . . .

Գ.

Բայց բաւական պատճեցանք կարծեմ, Հայկակ, հայրենիք քննելու և տեսնելու. դառնանք վերստին մեր սեփական հայրենիքն այլ։ — Մեծ չըկայ մեկ Հայ հայրենիքը՝ մեծ չունի՞ Հայն իր Հայաստանը։ . . . Ո՞ւր է այս հայրենիքս, ո՞ւր է այն աշխարհն։ . . . Ի՜նչ գիւրիւն և քնչ դժուար պատասխանել. երբեմն քաղցր և ոգեշունչ գաղա-

յիշատակը : Եթէ առաջին տեսութեամբ ամեն մարդու ծնած , մեռած , ապրած տեղն իրեն հայրենիք սեպեմք , ո՛րչափ օտար և երկարմէ հեռու տեղուանք պիտի ըլլան Հայոց հայրենիքին : Եւրոպայի արևելեան եզերքներէն մինչև յովկիան ձեռաւ կղզին , Նեղոսի ափունքներէն մինչև ի Վ.ոլգայի բերանը , անճառն Միջագետաց խորերէն մինչև յանտառուն Ֆինլանտիոյ դաշտերը կու գանուին , կու բնակին Հայ ընտանիք և ընկերութիւնք : — Ո՞ր է անոնց հայրենիքն . միթէ ամեն մեկուն իր ծննդեան տե՞ղն է՝ որ այնքան կու տարբերի մեկալներուն ծննդեան տեղէն՝ որչափ ամենէն աննման աչխարհք իրարմէ : ի՞նչպես կրնան Հայք մէկ հայրենիք մ'ունենալ : : . . . Պէտք է որ այդքան ցրուած և ցանուած հասարակութիւնը միայն դաւթական սեպհնք , օտարատունկ բոյսեր և ոչ բնիկ : Ազգին հայրենիքը վերնատեղը է այն տեղուանքն՝ ուր աւելի բազմութիւն և իրարու մօտ կու բնակին . մեկպէտ այս այլ մեր ազգին համար չատ դիւրին ճամբայ չէ . որովհետև բաւական մօտիկ բնակութեամբ այլ դեռ չատ ընդարձակ և անհուն երկրի երես սփռած կու տեսնեմք մեր ազգը , որ չէր կրնար այնքան տեղ բռնել իր համալրեալ և համարիւն անհատներովը , բայց եթէ ըլլար Ջինաց պէս բազմութին աճեցեալ ազգ մը . վասն զի դրեթէ Պարսից ծովէն սկսեալ ի հարաւոյ արևելից՝ 10 — 20 աստիճան աչխարհագրական լայնութեամբ ընչացան Ադրիական ծով ճգուած երկիրներու մէջ դէպ ի հիւսիս արևմտից՝ ցանցառ կամ խիտ բնակութեամբ կ'երևին մեր համազգիք , երբեմն նեղ և երբեմն լայն՝ բայց դրեթէ անընդհատ գօտւոյ մը պէս : Սակայն այս դեռ չատ ընդարձակ միջոցին երկու ծայրերն այլ թողլով , (ուր աւելի ցանցառ և ցրուած է հայութիւնն) , պէտք է մէջ տեղուանքն՝ (ուր աւելի խիտ և մօտիկ է բնակութիւնն) վիճականք մեր հայրենիքը . և յիրաւի կու տեսնեմք որ ազգերնուս բազմութիւնն կու բնակի վերին Եփրատ գետոյն եր-

կու կոչվերը. այ՝ կամ արևմտեան կոչվէն՝ մինչև Ասիա (Գըգըլըմաք) գետոյն եզերքը, ձախ կոչվէն՝ կամ՝ արևելքէն՝ մինչև ի Կուր գետ, կամ այլ անդին մինչև ի Կասպից ծով. հիւսիսէն այլ մինչև ի Կովկաս, հարաւէն մինչև յանապատն Միջագետաց։ Ահա վերջի միջոցս այլ դեռ բաւական ընդարձակ է մեր ազգին համար, ոչ միայն ըստ հիմակուան վիճակին, այլ և ըստ հին աւենի. ուրեմն եթէ ասոր այլ չորս սահմաններն ամբոխեմք՝ կրնամք տեսնել չափաւոր երկիր մը՝ յիշեալ գետոյն (Եփրատայ) երկու կողմը, որոց մէկն (աջակողմեանն) ըլլայ Փոքր Հայք, միւսն Մեծ Հայք. ասոնք, և մանաւանդ եռաքինս այս է բուն Հայաստան. հոն է մեր Հայրենիք. թէ և այսօրուան օրս, ասա՛ղ, ամեն աշխարհացոյցք այս մեզի ցանկալի անուամբ չեն նշանակեր այն երկիրը, այլ անոր քանի մը նահանգաց և գաւառաց անուամբք, կամ նոր և օտար անուններով։

Թողլով պատճառները և դէպքերը քննելու կամ յիշելու, վկայենք որ ազգերնուս մէկ մեծ մաս մը հիմայ իր բնիկ և սեփական հայրենեաց սահմաններէն դուրս տեղ կու բնակի կամ հաստատուած է. բայց դեռ մեծագոյն մաս մ'իր նախնեաց բնիկ երկրին մէջ է, որ է Մեծ Հայք, կամ անոր շատ մօտ տեղ, ինչպես են Փոքր Հայք, Կովկաս և Կիւլիկիա. այս եռաքինս թէ և հեռագոյն քան զբուն Փոքրը Հայս, բայց աւելի Հայկական հայրենի երկիր դարձեր է. վասն զի հոս աւելի կեդրոնացեր Հայութիւնն իր սեփական օրինօքն, տիրութեամբն, լեզուաւ և սեփական յատկութեամբք, որոց նշանք կու մնան իր հեռագոյծ և հեռագիր ապացոյն ակներեւ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԵՐՈԴՈՏԻ ՆԱԽՈՐԴՆԵՐՆ

(ՏԵ՛ս Նոյեմբ. 12. եր. 182)

Ա.յս նոր լեզուն մեկ օրուան մէջ չյօրինուեցաւ։ Հերոդոտ իր վարպետներն ունեցաւ որք իրեն համար եղան ինչ որ եղան, ինչ որ եղած է ն կոյրք (Աէտք) Հոմերոսի, և ահա հոս ալ կարծիքներով և մեկ քանի կտորներով է որ կարող ենք դարձիկը մը յօրինել խօսաբանից (լոկոկրաֆ) արհեստին վրայ։

Ա.յն արձակի հին յիշատակարանաց մէջ ամենէն օգտակարներն են, հայրենասիրական ճարտարախօսութեան ե.ւանդուել կեանք առած իրենց հնութեան ձևին պատճառաւ, Ա.թենացւոց քաղաքական նըզովքը, Դրկի պատերազմաց առեն խօսուած ազգային նզովքն, (որ է Լիքուրգի Լէօքրատի խօսած ճառը), նոյնպէս և Ա.քլէբեատներուն և Հելլոտաթներուննը։ Բայց Հերոդոտէ առաջ այս դրուածներն, այս պատմաբանին դրքերէն շատ աւելի հին ժամանակի ըլլալու չեն։ Իսկ իր բուն նախորդներուն գալով, խիստ քիչ կտորներ մնացած են, որոնց քննութիւնն և ընթերցումը խիստ օգտակար է։ Ինչպէս հին ճանապարհորդք անվնաս մնացած չէնքերուն առջև կանգ կառնէին, զանոնք իրենց ամբողջութեանը մէջ քննելը դիւրին ըլլալով, նոյնպէս չէ աղատ դի նոր դարուս քննելիք մանր կտորներն աչքէ կանցնին. նոյնպէս ալ, քննադատութիւնն, որ միայն հին դրականութեան ամբողջ գործերը քննութեան կառնէր, այսօր ամենէն վատը կտորտանքները կժողվէ, և կաշխատի ամենէն վատը մատանքներն իրար կցելով ամբողջը կազմել։ Ա.յս նկատմամբ դժբաղդաբար բոլորովին ապերախտ

դրթի մը պատասխանել է, զի ոչ միայն ժամանակին աւարներէն դժուարութիւն գտած են Ս. պատմականը։ Ս.ին արձակի ամենայն աւանդութիւններէն ալ միայն դատրեալ տպաքար մնացած են, այլ Հնչենացուց անտարբերութիւնն, արդէն Հերոդոտի և Նիւսխոխի դրոց պեղեցկութիւնէն յափշտակեալ, իրենց նախորդներուն գործերն եւ բնաւ վրայ թողան և բոլորովին մոռցած են։ Հալիքարնասի Տընիսի ժամանակներէն մեկ քանիները ծագիւ անուանէ ճանչցուած են. իրենց գործոց շատերը կըսէ, քննաբան մը, բնաւ մինչև մեզ հասած չեն, և անոնք որ ժամանակիս Ս. լեկոծութիւններէն զերծ մնացած են, հեղինակներուն անթոշ մնացած են։ «Ասոր համար իրենց ըրած քննութիւնը բոլորովին անուշադիր եղած է։ Փիսիսխոսի վրայ դրած դիրքն, որ այս մեծ դրագետին աղանդը մեզ յայտնէր պիտի, զարնելով մեզ թէ պատմութիւնը դրած է և ինչ որ թողցած է, ընդհակառակն այս խնդրոյն վրայ անկատար է, և որ Միլեցի Հեքաթեայ, որ Համբաստի, Եաւոնի որ Լիբիեն Զանթիոսի, որ Լեզվոյ Հելլանիքոսի վրայ, մեր դրագետէն աւելի բան չեն սովրեցներ։ Տընիս ամեն բանէ աւելի քերականագէտ ըլլալով, լեզուին ձևերը կսովրի, առանց ուշադիր ըլլալու դրուածոց իմաստին. մեկ քանի տողերով, ոյն հին բառաբանութիւնները դրուածոց մէջ լեզուի պարզութիւնն և մանաւանդ ոճի քիչ բարձրութիւնն, առաջագիտ ճաշակը կգուշնէ։ Անոնցմէ ոմանք այսու ամենայնիւ, կըսէ, առանց կոչելու անոնք, որք այսպիսեաւ հասարակութիւնէն կզերծանցնեն, երբեմն հաճելի դարձուածքներ և քիչ կամ շատ ընդհանուր դարձուածքներ ունին, ասոր համար է որ իրենց գործերը մինչև մեզ հասած են։ Բայց պետք էր գիտնալ, որ Տընիս այս կարեւոր մանրամասնութեան վրայ համր է, եթէ այն պատմաբանք յառաջ բերած առաջագիտից կհաւատային, կամ եթէ քննադատակը զանոնք իրենց ճշմարիտ արժէքէն կդատէին,

կարեւոր որոշմունք, զոր յառաջ պիտի բերինք, Հերոդոտի վրայ խօսելու առնենիս։ Եւ իրենց ոճին պարզութեանը գալով, կարելի է ըսել որ ատենակ մը պակասութիւն մը, զանխէ ճշմարտութիւնը փնտռելու բծրծումին նուիրեալ մտաց նշանն, և որք երեսի վրայ թողուցած են ձեւն, նըպատակ դրածնուն պատուաւոր ուշադրութիւնքն։ Քննութեան գործոն որպիսութիւնն է լեզուին խիստ մերկութիւնն ու չորութիւնը։ Բայց, արձակը, նոր ստեղծուած ըլլալով, մէկ օրուան մէջ իր կատարելութիւնը չէր կրնար գտնել։ Գ. Բ. Լ. Գուրիէ, փոքր ինչ խառն և սակաւիմաստ այս հին արձակին բնաւորութիւնը խիստ ազէկ հասկցած է, և այս խառնակութիւնն հաւիւ կազատէ, զոր բծրծումին կմտցնէ Հերոդոտ"։ Առաջին փորձերն անճի եղան, կըսէ, մեղ կմնայ կարծել, որ կտեսնուի այն ժուռաթութիւնն, որ ունեցան առանց չափի բազադրելու, և այս դաշնակութիւնը զանց անցնելու, որ ոճը կանոնաւորելով, հաստատելով, շատ բաներ մտցնել կուտար . . . ատոնք (Հերոդոտէն առչի պատմաբանք) բնաւ ոճ չունեցան, այլ խօսքի կտորներ, մէկզմէկու վրայ ձգուած հատուածներ, առանց կապակցութեան և յարմարութեան"։

Ցէմբլիուս ճարտասանն այս հին ոճը, հնութեան արձաններուն հետ կը բազդատէր, որուն բոլոր արհեստը կերեսի վերածել տեսակ մը առոյգ նիհարութեան։ Ընդհակառակը, միչին դարու ոճը, Սրբէն Ֆրտիասի գործոց կը նմանի, որք միայնոյ ամայն վեհանձնութիւն և ճշդութիւն ունին։

Ա. հա ատոնք են դլխաւոր նշաններն որոնցմով կրնանք ցուցնել պատմութեան այս առաջին փորձերուն նրաց վիճաբանութիւնն, որ նշանակուած են, ուրիշ ընթացքի մէջ կըվերաբերի. սակայն ճշմարիտ է հոս նշմարել, ընդհանուր կերպով, Հերոդոտի գործոյն նախորդ վիպասութեանց արժէքն, որ շատ կնաեւրուս վրայ զանոնք պիտի հատատտէ և կատարեալ գործէ։

Նախ և առաջ նշմարենք այն անունն որ Յունաստա-
նի այս առաջին լուծիչքները կառնուն. խօսքեան կը կոչեն
ինքզինքնին որն որ միանգամայն կնշանակէ, իրենց բաղաք-
րութեանց մէջ արձակին վերջնական դատաստանութեամբն և
մէկ իրենց պատուիրիւններէն հեռացնել առաջական ամեն
պարագայն, մի միայն հաստատեալ իրեր մոռնալ։ Ա. յս կե-
տը Պլուտարքոս մոռցած չէր, զոր տեսանք վերոյշեալին
մէջ։

Խօսքաններուն ունեցած միջոցները բաւական էին այս
նպատակին հասնիլն, այո՛ կրնանք հաստատութեամբ պա-
տասխանել։ Ա.րդարև, պատմութիւնը կհիմնուի հնաբանու-
թեան և աշխարհագրութեան վրայ։

Ոստի Զ. դ դարուն, Յունաստանի մէջ այս ուսմունքները
մեծ յառաջադիմութիւններ ըրած էին։

Ա.րդէն որոշ և ճշմարիտ դիտութիւններ յօրինած էին,
ունենալով իրենց գործիքներն ու մեթոտները։ Հաստատակուց
չէնքերուն վրայ թագաւորաց և քահանայից ճշմարիտ ցան-
կերն արձանագրուած էին, կարևոր դիպաց համառօտ պատ-
մութեամբը։ Տարինները, սերնդոց թուոյն միջոցաւ հաշուած
էին, որնոր մեծ ճշդութեան միջոց մ'էր, բազմաթիւ տա-
րիներու համար։ Մէկ քանի գաւառաց մէջ, ըղօրինակ
Պէօթիի մէջ ինը տարին շրջան մը ընտրած էին։

Աչխարհագրութիւնը կճոխանար ճամբորդներով, որք
հետզհետէ կչատնային, և վաճառականութեան անդադար
պիտոյքներն և հելլենացւոց բնական հետաքրքրութիւնը, ինչ-
պէս Ա.լեքսանդեան թագաւորաց հպատակութիւնն։ Բայց տը Սե-
լէն Հէքաթէ, որ Լեզպոզ Հելլանիքոս, Եւրոպական ա-
ռաջին աշխարհագրութիւնները կգրէին, Տարիուս բարեան-
ձի Սիբլաքոը կխաւրեր միջերկրական Սպիան քննելու։ Նի-
քոս Ա.փրիկէի եղերց վրայ շրջանիս հռչակաւոր ճամբորդ-
մը ըրաւ։ Վերջապէս, Միջերկրականի բոլոր եզերքներն
երկայն ժամանակ իրեր Փիւնիկեցի և Յոյն գաղթակա-